

ԿՅՈՒՐԵՂ ՍՐԱՊՅԱՆԻ ԱՐԽԻՎԸ

Լեզվարան և մաթեմատիկոս Կյուրեղ (Ալեքսան) Սրապյանը ծնվել է 1844 թ. Կեյվե գյուղաքաղաքում (Թուրքիա)։ Սկզբնական կրթությունը ստացել է տեղի հայկական դպրոցում. ապա սովորել և ավարտել է Երուսաղեմի ժառանգավորաց դպրոցը։ 1868 թ. ձեռնադրվել է վարդապետ և 1868—1872 թթ. հոգևորականի և ուսուցչի պաշտոններ վարել Երուսաղեմում։ Գևորգ IV կաթողիկոսը 1875 թ. նրան հրավիրում է Էջմիածին, ընդունում միաբանության անդամ և աշխատանքի նշանակում ճեմարանում՝ որպես մաթեմատիկայի դասախոս։ 1878 թ. Կարսի մարզը Ռուսաստանին միացվելուց հետո տեղի հայ բնակչության, եկեղեցիների, վանքերի, հնուիթյունների և դպրոցների վիճակն ուսումնասիրելու, տեղեկագիր կազմելու նպատակով Գևորգ IV-ը ալյոսեղ է ուղարկում Կյուրեղ Սրապյանին։ 1879 թ. Արարատա ամսագրում նա հրատարակում է «Ճանապարհորդություն ի նահանգն Կարուց» հոդվածը, իսկ Կարսի մարզի վերաբերյալ նրա կազմած փաստալից և արժեքավոր տեղեկագիրը հրատարակվել է միայն վերջերս¹։

Կ. Սրապյանը 1880—1881 թթ. ճեմարանում դասախոսում է նաև հայոց լեզու. նա մանկավարժական աշխատանքին զուգընթաց զբաղվել է նաև հայագիտությամբ։ Մահացել է 1895 թ., նոր նախընկանում։

Սրապյանը թողել է մանկավարժական, լեզվարանական, բարոյախոսական, ճանապարհորդական և այլ բնույթի աշխատություններ, որոնց ձեռագրերը գտնվում են ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում (Մատենադարան)։ Նրա արխիվային ֆոնդում, ուր կան 1070 միավոր վավերագրեր, պահվում են իր իսկ անտիպ և մասամբ տպագրված հետևյալ աշխատությունների ձեռագրերը՝ Հուշերի մատյանը, «Հայերեն լեզվի նախնական արմատները», «Ազգային վիճակի բարվոքման մեկ եզանակ», «Յիշատակարան անցից Սուրբ խաչի վանացն որ ի Նոր-Նախիջևան», «Քերականություն հայերեն լեզվի», «Համեմատություն հին և նոր գավառաց Հայոց մեծաց», «Թե՛ զի՞նչ

է մկրտություն», «Արեգակնային տարի ըստ Կոպերնիկեայն, Եմաբիայ ժամանակագրություն», «Շարայարություն պակասորդի Բ. դրոյն Ստեփաննոսի Տարօնեցոյն», «Ի խորհրդարան թեմական հոգևոր դպրոցին հայոց նախիջևանու և Պեսարապիոն», «Ծրացույց 1893 թ.», «Վաղարշապատ՝ մայրաքաղաք հայոց», «Երուսաղեմի պատրիարքության սկիզբն ու շարունակությունը», «Հայոց լեզվի այբուբենը», «Պատմություն Քրիստոնեական եկեղեցվոց», «Անտվածաբանություն ըստ վարդապետության Քրիստ. եկեղեցվոց», «Մովսես Խորենացվո պատմություն հայոց», «Պատմագիր Ագաթանգեղոս», «Հայոց դպրոցի մանուկներուն», «Հայ գրավոր մատենագրություն», «Խորհրդածություն երեսայի դաստիարակության մասին», «Անտվածաբանություն, ըստ հայտնության հին և նոր կտակարանաց», «Ծրագիր հայոց լեզվի», «Ծանոթություններ առաջին դրոց», «Առձեռն ցուցակ ծախուց Ս. Խաչի վանաց, որ ի Նոր-Նախիջևան», այլ ուսումնասիրություններ, ճառեր, քարոզներ, շրջաբերականներ, դիմումներ, դպրոցներին վերաբերող գրություններ, Ա. Պ. Դյակոնովի «Բաթնացի Կյուրոս Ասորի եկեղեցական պատմիչ 7-րդ դարի» աշխատության Կ. Սրապյանի թարգմանությունը։

Կ. Սրապյանը ժամանակին հրատարակելու նպատակով մի շարք վավերագրեր և նամակներ է հավաքել։ Ուշագրավ են 1826 թ. դեկտեմբերի 5-ին Հնդկաստանից Մ. Թադիադյանի նամակը՝ ուղղված Ներսես Աշտարակեցուն, ուր խոսվում է Էջմիածնի աթոռի համար պիտանի գրքեր ձեռք բերելու և երկու հայ երիտասարդների Հնդկաստանի անգլիական դպրոցում սովորելու մասին։ Կան նամակներ՝ ուղղված էջմիածնի միաբանության անդամներին (1. Տ. 1829, 8. VII. 1844, 28. X. 1844, և. Արովյանի որոշ նամակներ (24. III. 1832)։ Ա. Արարատյանի նամակը՝ հասցեագրած Հարություն Ալամդարյանին և այլն։

Կ. Սրապյանի արխիվում են գտնվում իրեն հասցեագրած Կոմիտասի, Ս. Մալխասյանի, Մկրտիչ Խրիմյանի, Մուրացյանի, Կ. Կոստանյանի, Կարա-Մուրզայի, Պ. Պողոսյանի, Ռ. Պատկանյանի, Գ. Խալաթյանի, Ս. Կուկունյանի, Կ. Եգյանի, Ծ. Լալայանի, Մակար Բարխուդարյանի, Լ. Սարգսյանի, Լ. Սեդրոսյանի, Փիլիպոս

¹ Տե՛ս մեր հրապարակումը՝ «Բանբեր Հաստատանի արխիվներ», 1970, № 2։

վարդապետի, Ա. Մաաուրյանի, Հ. Հովհաննիս-
յանի, Խ. Զտրիֆյանի, Գարեգին Հովսեփյանի,
Ե. Գեղամյանի, Սուքիաս Պարզյանի, Սահակ
Ամատունու, Գ. Բաշինջաղյանի, Գրիգոր Աղ-
վանյանի, Մեսրոպ արքեպիսկոպոսի, Արիստա-
կես եպիսկոպոսի, Գ. Բեղելյանի և ուրիշների
նամակները, Կան նամակներ հարազատներից,
բարեկամներից, իր գրած նամակների պատճեն-
ները, բանաստեղծությունները, քառյակները,
թարգմանությունները:

Հրատարակելու նպատակով Կ. Սրապյանի
հավաքած զանազան նյութերից ուշագրավ են
«Վրաց Հերակլ Բ. Թագավորի և տպագրիչ Պո-
ղոս Հովհաննիսյանի պայմանագիրը»², Տաշտուն
գյուղի Հովհաննես Մկրտչի անվան եկեղեցու
1646 թ. մագաղաթյա հիշատակարանը, Շահմիր
Սուլթանի 1792—1795 թթ. Ղուկաս կաթողիկո-
սին և ուրիշներին գրած նամակները, հայ-ռու-
սական, հայ-վրացական, հայ-պարսկական, հայ-
թուրքական, հայ-ասորական, հայ-ֆրանսիական
հարաբերություններին վերաբերող վավերագրե-
րը, Շամախի քաղաքին վերաբերող 1686 թ.
գրված արաբատառ վավերագիրը, Սիմեոն կա-

թողիկոսի գրությունը, Ներսես Աշտարակեցուն
ուղղված գրությունները, վիժական արձանա-
գրություններին վերաբերող նյութերը, Նույն
արխիվում են Կ. Սրապյանի կազմած բառա-
րանները, «Գաղաղի ռավկական բառերի բառա-
րանը» (հեղինակը չի նշված), զանազան ան-
ձանց ուղղված՝ ազգագրագետ Խ. Լեոնյանի նա-
մակները և ինքնակենսագրությունը, Ն. Ակինյա-
նի և Մ. Օրմանյանի՝ Խ. Լեոնյանին ուղղված
նամակները, «Թուրդերը և հայերը» հոդվածը,
Թուրքիայի և Պարսկաստանի պատմության
վերաբերյալ Խ. Լեոնյանի նյութերը, ուր տեղե-
կություններ կան Դավիթ-Բեկի մասին, Խ. Լեոն-
յանի «Վան» խորագրով աշխատության ձեռա-
գիրը և նրա հավաքած ազգագրական նյութերը,
ուրարտագետ Կարապետ Բասմալյանի Խ. Լե-
ոնյանին ուղղած նամակները, Արիստակես ե-
պիսկոպոս Սեդրակյանի «Ամուսնական խնդիր»
խորագրով աշխատության ձեռագիրը, «Դատա-
տանագիրք» խորագրով մի ուսումնասիրություն
(հեղինակը անհայտ), Նոր-Նախիշեան քաղաքի
և հայկական գյուղերի վերաբերյալ նյութերը,
որոնք արժեքավոր են բանասիրական, մանկա-
վարժական և այլ հարցեր պարզաբանելու հա-
մար:

² Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1956,
№ 3,